

Ուսումնարանն ունի բերել տուեալ իմայրաբաղաքէն Պետերբուրգաց զանազան Ուսումնական պիտոյք և մարդակազմութեան գործիք, քարտէզք զրեանք և այլ մանրամասն պիտոյք և պահպանին խնամարկութեամբ գործադրելով զիւռաքանչիւրան յիւրումն պիտանաւութեան:

Ի ՆԱՐ - ՆԱԽԱԳԵԼԱՆՀ

ԽՈՀԱԳՐՈՒԹԵԱՆ ԵՐԱՐԱՐ ԵՀԱԳՐՈՅ:

Նոր Խախիջևանի սուրբ Համբարձման եկեղեցւոյ Մեծապատիւ երեցփոխան Պետրոս Խիկողայոսեան Խոմաճեանցի խոչեմ մատակարարութեան յանձնուած Աստուծոյ տաճարին շինութեան և պայծառութեան համար արած բաղմատիսակ աշխատանքը հրապարակաւ յայտնելը պարտք կհամարիմք մեզ ի տեղիկութիւն համազգի եղբայց ամսագրոյդ միջոցաւ:

Մեծապատիւ Պետրոս Խոմաճեանցը երեցիսխանութեան պաշտօնը, ընդունած օրէն ի վեր առանց խղճմտանաց վկայութեան դէմ մեղանչելու կրնամք ասել՝ զի սկսաւ եկեղեցւոյ ներքին և արտաքին նորոգութեամբ պարապել և զոր մինչեցայժմ ալ կշարունակէ, չնայելով որ նորամէ առաջ եղած երեցփոխանները առանձին եկամուտներ ունէին և կրնային սորս արածները սցն ժամանակները ամենայն հեշտութեամբ անել՝ ինչ որ այժմ Պետրոս Խոմաճեանցը արաւ և կանէ դարձեալ մեծամեծ նեղութեանց ենթակուեով՝ առաջուան եկեղեցական արդեանց աղբիւրներուն սպառմանը պատճառաւ: Սակայն այս ալ չմոռանամք ասել՝ որ սա ճանաչելով իւր պարտականութեան վեհ նշանակութիւնը և հասկանալով ժաղովրդեան զինքը ընտրելոյն զիսաւոր պատճառը՝ որն է յօգուտ եկեղեցւոյ և ոչ իւր անձնական շահուց և փառասիրութեան, հոգեկան զերմեռանքութեամբ շարժեալ աշխատեցաւ Աստուծոյ սուրբ տաճարը բարեզարդելու հնարներ գտնելու:

Ա. Ա. Եհափառ Կաթողիկոսի կոնդակին համացն առաջինը քաղաքիս մէջ Պ. Պետրոս Խոմաճեանցը եղաւ՝ որ սուրբ Համբարձման ե-

կեղեցւոյ գաւթի մէջ բացաւ ծխական Հոգևոր դպրոց բոլորովին համեմատ ծխական դպրոցաց կարգադրութեանցը որոյ մէջ մինչև ցայժմ կուսանին 40 աղքատիկ ժողովրդոց որդիներու Այս դպրոցին մէջ բաց ի միւս ուսանելի առարկաներէն՝ 1875 տարւոյ Յուլիսի սկզբին սկսուեցաւ դաստրուել ընդունակ աշակերտոց Վ. Եհափառ Հայրապետի վեհ կամաց և ազգաշահ նպատակին համաձայն հայկական եկեղեցական ձայնագրութիւնը որց գասառութիւնը յանձնուած է նոյն եկեղեցւոյ Ա. Սարկաւագ Փախականին Վ. Երջնոյն արհաջան աշխատութեամբը արդէն բաւական ժամանակ է՝ պատարագի բոլոր երգեցողութիւնը գեղեցիկ ներդաշնակութեամբ կերպեն նորուս աշակերտքը և յոյս կայ՝ որ ապագային մեր եկեղեցին՝ ունենայ նոր ձայնագրագէտ երգեցող դպիներ:

Բ. Խոկղբանէ շինութեան եկեղեցւոյն՝ պատկերները իւրեց գեղեցկութիւնը կորսնցնելով անհամբերութեամբ կոպասէին խնամոց երեցփոխանի աշխատութեան՝ որ յարութիւն առնեին երենց հընութեան շապիկէն, ահաւասիկ Պ. Պետրոս Խոմաճեանցը առանց եկեղեցական արդեանց օգնութեան գտաւ քանի մի բարեկացտ և հոգեսէր անձինք, որք նորա յորդարանքը և խնդրանքը եկեղեցւոյ բոլոր պատկերները նորոգել տուին ամենայպայծառ և շքեղ կերպով:

Գ. Միայն աւագ խորանի խաչկալը մնացեր էր իւր առաջուան հին զրութեան բայց միշտ Պ. Երեցփոխանը հնար կվնառեր այն ալ կերպով մի նորոգել տալու որովհնեւե երկարատև փորձոց վախճանը յաջողութեամբ կպսակուի, այսպէս ալ Պետրոս Խոմաճեանցի երկար մատանութեան վերջը շատ յաջողակ եղաւ և ահա յանկարծ տեսանք եկեղեցւոյ մէջ խաչկալի շինութիւնը որոյ վերայ շատ ականատեսներ հիացմամբ կնայեն և կղարմանան Պ. Երեցփոխանի հնարիմաց յաջողակութեանը վերայ:

Դ. Ժողովրդականք սորա երեցփոխանութեան ժամանակին միայն արժանի եղաւ հրաւիրուել յեկեղեցի տարեկան ելից և մտից հաշուատեսութեան համար և հասկացողութիւն ունենալ եկեղեցւոյ դրութեան վերայ սորանէ առաջուան:

երեցիոխաններուն ժամանակ ժողովուրդը զուրկ
էր այդ տեսակ հաշիւներու մէջ մասնակցելու։ Ա-
մենայն հաշիւ մանրամասն աչքէ անցնելէն յե-
տոյ՝ իմսցան նաև երեցիոխանի գոյացուցած
զրամապուխը՝ որ արքունական դաւածու տուած է։
Այսպէս մեր երեցիոխանը ամենայն հաշիւ եկե-
զեցական հրապարակաւ ժողովրդեան կյայտնէ։

Դ. Յ.

Ի 43 Առողջ 1876 ամ.

Է Ե. Նեղին վան:

Առանձնա մ ուսում անհաջող սահման առաջ անսկան դարսութ Համար Համարական համարական դարսութ Համար Համարական դարսութ Ա. Գ. Ք. Ի. Տ. Ս. Ի. Տ.

Խաճադրութան Արտեգու Ամսաճրոյ.

Ցանկալի էր այս վաղ ժամանակից տկար լե-
զուով թոթովել սիրելի Աղպայիններիու Աղեք-
սանդրապոլու վիճակի Ազգայնոց վերաբնրու-
թեամբ մի քանի խօսքեր ամենակին պարզ և ան-
պաճայն որոնք համեմատելով միւս մի քանի վի-
ճակների զալթական ժողովրդոց հետ՝ բաւական
յետ ենք տեսնուում թէ նիւթական՝ բարոյական
և թէ ուսումնական զարգացման մասամբ։

Թէ ով է եղել դորա բուն իսկ պատճառը՝ ար-
դեն շատ մարդ ասպարէզ ելնելով՝ յայտնի
խոստովանուում և անիծեալ տղիտութիւննն, որ
իրա թանձր սև քօղի տակ կաշկանդա՝ թմբե-
ցրել է մեր խեղճ ժողովրդին, որոնք չեն կարողա-
նուում բարձրացնել իւրեանց աչքերը, և ով պէտք
է զարթեցնէ զդոսա այդ մահաբեր խոր թմբու-
թիւնից եթէ ոչ՝ Վեհափառ Հայրապետի գէպի
ուսումնասիրութեան ծաւալումն ունեցած քաղց-
րիկ ակնածութիւնը և պաշտելի փոյթը, և որպիսի
միջոցներով, եթէ ոչ՝ զնելով նոցա մէջ, ինչպէս
նորին Սուըրբ Օծութեան անհամբեր եռանդն է,
ամենայն տեղ ուսումնաբանների հիմքեր, Ա-իս
հիմքեր եմ առում, որովհետեւ դորանից է կա-
խուած եղել մի որ և իցէ աղքի կենդանութիւնը,
նոքա՝ այն օր հնաեալ հիմքերն են եղել կատարեալ

մարգկութեան, ճշմարիտ աստուածպաշտութեան
և վերջապէս բոլոր լուսաւորեալ ազգերու յառա-
ջազիմնութեան միակ հաւաստիքն. ինչու ուրիմն
միայն Հայր տարրեր պէտք է մասր այդ փրկութեան
յոյսից այդ Հային ընական էր միթէ. ոչ. այդ
Հայի համար մի անողոքելի ճակատագիր չէր. ին-
չու ուրիմն խանդակաթ ուրախութեան և յօժար
սրի ջերմ արտասունքով չենք թրջում այն հո-
ղու որի վերայ դնելու ենք ուսումնաբանների հիմ-
քեր, թէ եղել են մինչեւ ցայսօր և կան տեղ
տեղ այդ հիմքերը սակայն՝ պէտք է ճշմարիտն
ասել, որ նոցանից շատերը համարեա գետնից զեռ
մի քանի կարգ հազիւ հազ բարձրացած՝ արե-
գական դժնդակի խայթացների դէմ տարիներում են
ձենձերվում, մի քանիսի որմերի վերայ սարգերը
հօվանաւորութիւն դանելով մսիթարվում են եր-
կար միջոցներ, և ուրիշ շատերն էլ իւրեանց զե-
ղեցիկ շինուածքներով զիւղերի մէջ հիմնուած
սովորական խրճիթներին զարդարանք են համար-
վում ցերեկը, իսկ զիշերը՝ բուերին պահպա-
նում։

Պոցանից Շիրակայ մէջ բացառութիւն է կազ-
մել մի միայն չքնաղաշէն Մենաստանը Հառիճոյ
վանից, որոց ջերմեռանդութեան հզգուով և խան-
գակաթ սիրով ի գործ մտեալ բարեցան Ընկե-
րութիւնը հայրենասիրական և ազգասիրական ե-
ռանդով վասուած՝ չեն ինայել իւրեանց թան-
կագին անձը բոլորովին զօհ բերելու նորա ի սկզ-
բանէ ունեցած ողբոց արժանի և աւերածոց թե-
րութիւնը նորոգելու առթիւ. Այս Սրբութեան
վայրը իրեւ պճնաղարդեալ թագուհի բազմելով
Արագածու սոսրոտում, շատ վհատեալ անձանց
տարաբաղդութիւնից դէպի բաղդաւորութիւն հը-
րաւիրածէ և զիթէ յամենայն զասակարգից
երկելիները հեռաւոր և մերձաւոր տեղերից ճա-
նապարհորդելով դէպի ի Շիրակ՝ հռչակեալ Մե-
նաստանիս ուսումնառութեան բեղմնաւոր արգա-
սիբը վայելիէն զինի՝ պարծանք են համարուել
բարեպաշտ Ընկերութեանը իւրեանց ցցց տուած
նախանձելի յառաջազիմութեամբը և ի տեղիս
տեղիս Շիրակայ խորքերում վարած կարեոր
պաշտօններով։ Սոցա զասակարգում արժան է
համարել մի եռանդուն դպրի (Պաշտառը Տէր